

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ Կ. ՊԱՊՈՅԱՆԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ԱՐԳԵԼԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻՆ

24.08.2014թ.

Կոտայքի մարզպետի տեղակալ Կ. Պապոյանն այցելել է <<Արգելի ԱԱՊԿ>> ՓԲԸ և հանդիպում ունեցել բուժհաստատության աշխատակիցների հետ:

Այստեղ մարզպետի տեղակալին ներկայացվել են առողջապահական հաստատության գործառույթների և աշխատանքների կազմակերպման ուղղությունների վերաբերյալ մի շարք մանրամասներ:

Աշխատակիցների հետ հանդիպման ընթացքում Կ. Պապոյանը կարևորել է ընկերության արդյունավետ գործունեությունը և նշել, որ պետք է ձեռնարկել համապատասխան միջոցառումներ <<Արգելի ԱԱՊԿ>> ՓԲԸ-ի շարունակական զարգացման ուղղությամբ:

Մարզպետի տեղակալը պատասխանել է նաև բուժաշխատողների կողմից տրվող հարցերին, անդրադարձ կատարել նաև վերջիններիս աշխատավարձերի բարձրացման հնարավորություններին: